ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մարտի 18-ի որոշմամբ և հրապարակվում է “Արմենիա” Միջազգային Օդանավակայաններ” ՓԲԸ Գնումների գործընթացի իրականացման կարգի համաձայն

Մրցույթի ծածկագիրը՝ “**ԱՄՕ-ԲԵԷՍՄԱՇՎ-62/26**”

“Արմենիա” Միջազգային Օդանավակայաններ” ՓԲԸ-ի կարիքների ՛՛Զվարթնոց՛՛ օդանավակայանի N2 բաշխիչ ենթակայանի էլ. սարքավորումների մատակարարման և արդիականացման, ինչպես նաև շենքի վերանորոգման աշխատանքների կատարման համար անցկացվող “**ԱՄՕ-ԲԵԷՍՄԱՇՎ-62/26**” ծածկագրով մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխությունը և նկարագությունը՝

N 1 Փոփոխության նկարագրություն.

Բաժին 2. Որակավորման չափանիշները
Մաս 1՝ նոր խմբագրություն.

Անհրաժեշտ է ներկայացնել՝

- ՀՀ տարածքում էլեկտրատեխնիկական և շինարարատեխնիկական աշխատանքներ իրականացնելու թույլտվության՝
  - էներգետիկ ենթակառուցվածքների կառուցման լիցենզիա
  - 6–10 կՎ ենթակայանների կառուցման իրավունք

- ISO 9001:2015 - առկայությունը կդիտարկվի որպես առավելություն
- **ISO 14001:2015** – առկայությունը կդիտարկվի որպես առավելություն
- **ISO 45001:2018** – առկայությունը կդիտարկվի որպես առավելություն

- Մասնակիցը պարտավոր է ներկայացնել ՏԵ-02-25-ԲԳ նախագծով նախատեսված սարքավորումների մատակարարման ապահովումը հավաստող փաստաթղթեր:
Որպես մատակարարման ապահովումը հավաստող փաստաթղթեր կարող են ներկայացվել, որ մասնակիցը հանդիսանում է համապատասխան արտադրողի կամ պաշտոնական մատակարարի՝ պաշտոնական գործընկեր(Partner), կամ ունի արտադրողի/պաշտոնական դիստրիբյուտորի կողմից տրված լիազորագիր, համաձայնագիր, կամ նմանատիպ մատակարարման ինվոյս (invoice), հաշիվ-ապրանքագիր, մատակարարման հաստատումներ կամ նմանատիպ այլ փաստաթղթեր, որոնք ապացուցում են տվյալ սարքավորումների ձեռքբերման կամ մատակարարման իրական հնարավորությունը:

Նշում՝ *մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), որի դեպքում՝*
- հայտին կցվում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը.
- հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

- մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն
- համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ

N 2 Փոփոխության նկարագրություն.

Բաժին 4. Հայտերի բացման ձևը, վայրը, օրը և ժամը. Կետ 1՝ նոր խմբագրություն.

1. Հայտերը բացվում են ԱՄՕ-ի հետևյալ հասցեում՝ Երևան 0042, Զվարթնոց Միջազգային Օդանավակայան, N3 վարչական շենքում գտնվող նիստերի դահլիճ՝ 2026թ.-ի ապրիլի 8-ին, ժամը 15:00-ին: Մասնակիցները Հայտերի բացման նիստին մասնակցելու համար պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով և լիազորությունները հավաստող փաստաթղթով: Միանձնյա գործադիր մարմնի (տնօրեն, գլխավոր տնօրեն և այլն) անձամբ մասնակցության դեպքում ներկայացվում է անձնագիր և պետական ռեգիստրի վկայականի համապատասխան ներդիրը, որով հավաստվում է տվյալ անձի միանձնյա գործադիր մարմին նշանակված լինելու հանգամանքը, իսկ լիազորված անձի դեպքում ներկայացվում է իրավաբանական անձի կողմից պատշաճ կերպով տրված լիազորագիր:

N 3 Փոփոխության նկարագրություն.

Բաժին 5. Հայտերի ներկայացման պայմանները, ներառյալ ձևը, տեղը, ժամկետը և հայտի լեզուն, հայտերի վավերականության ժամկետը. Կետ 1՝ նոր խմբագրություն.

1. Հայտերի փաստաթղթային տարբերակով ներկայացման վերջնաժամկետն է 2026թ.-ի ապրիլի 7-ը, ժամը 18:00-ն:

Փոփոխության հիմնավորում:

Համաձայն "Արմենիա" Միջազգային Օդանավակայաններ" ՓԲԸ Գնումների գործընթացի իրականացման կարգի 5րդ գլխի 19 և 21 կետերի:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել "**ԱՄՕ-ԲԵԷՍՄԱՇՎ-62/26**" ծածկագրով գնումները համակարգող Գ.Սարգսյանին:

Հեռախոս՝ +374 98 20 82 79:

Էլեկտրանային փոստ՝ gusargsyan@aia-zvartnots.aero

"**ԱՄՕ-ԲԵԷՍՄԱՇՎ-62/26**" ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: